«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՅԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ

ԱՌԱՐԿԱ՝ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ, ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 9/9

ՀԵՂԻՆԱԿ՝ ՔՐԻՍՏԻՆԵ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ՃԱՄԲԱՐԱԿԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3 – 7

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹ. 8

1.1ՈՐՈՇԻՉ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ 8 -9

1.2ՀԱՏԿԱՑՈՒՑԻՉ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ 10

1.3ԲԱՑԱՀԱՅՏԻՉ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ 10 -11

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԲԱՑԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹ. 12

2.1 ԽՆԴԻՐ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ 12

Ա. ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ 13-14

Բ. ՀԱՆԳՄԱՆ ԽՆԴԻՐ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ 14

Գ. ԱՆՋԱՏՄԱՆ ԽՆԴԻՐ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ 14-15

Դ. ՄԻՋՈՑԻ ԽՆԴԻՐ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ 15

Ե. ՎԵՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ 15 - 16

2.2 ՊԱՐԱԳԱ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ 16

Ա. ՏԵՂԻ ՊԱՐԱԳԱ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ 16-18

Բ. ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՐԱԳԱ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ 18 - 20

Գ. ՊԱՏՃԱՌԻ ՊԱՐԱԳԱ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ 20

Դ. ՀԻՄՈՒՆՔԻ ՊԱՐԱԳԱ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ 21

Ե. ՆՊԱՏԱԿԻ ՊԱՐԱԳԱ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ 21-22

Զ. ՊԱՅՄԱՆԻ ՊԱՐԱԳԱ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ 22 - 23

Է. ԶԻՋՄԱՆ ՊԱՐԱԳԱ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ 23

Ը. ՁԵՎԻ ՊԱՐԱԳԱ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ 24

Թ. ՉԱՓԻ ՊԱՐԱԳԱ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ 25

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 26-28

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բարդ նախադասության բաղադրիչ պարզ նախադասություններից մեկը ամբողջ բարդ նախադասության կառուցվածքային կենտրոնն է, գերադաս մասը, իսկ մյուսը գտնվում է նրանից շարահյուսական կախվածության մեջ՝ կատարելով առաջինի որևէ անդամի շարահյուսական պաշտոնը կամ լրացնելով ամբողջ գերադաս մասին: Այսպիսի նախադասությունները կոչվում են բարդ ստորադասական:

«Բարդ ստորադասական նախադասության գերադաս մասը բերականագիտության մեջ կոչվում է գլխավոր նախադասություն, իսկ շարահյուսորեն նրանից կախվածության մեջ գտնվող, նրան ստորադասված մասը՝ երկրորդական նախադասություն[1]»: Այսինքն՝ բարդ ստորադասական նախադասության անմիջական կազմիչ նախադասությունները կապված են ստորադասական հարաբերությամբ: Բարդ ստորադասական նախադասության բաղադրիչների բերականական ու իմաստային կապն ավելի սերտ է, քան համադասական նախադասության բաղադրիչներինը: Այդ սերտությունը զուգակցվում է ստորադաս նախադասությունների, մասամբ էլ՝ գլխավոր նախադասությունների ինքնուրույնության պակասով: Օրինակ՝ Հաբուդը գիտեր, **որ հայրը խոնարհ մարդ է...** (ԱԲԵ 35) Բերված բարդ ստորադասական նախադասության մեջ հիմնական բովանդակությունն արտահայտված է երկրորդական նախադասությամբ, իսկ գլխավորը, որը թեև բերականորեն գերադաս է, ըստ էության ձևական միջոց է դարձել:

«Ստորադաս նախադասությունը գերադասի հետ հիմնականում կապվում է շաղկապներով, հարաբերական դերանուններով և շարահարությամբ: Այսպիսի կապակցական դերով կարող են հանդես գալ բոլոր ստորադասական շաղկապները ու հարաբերական դերանունները[2]»: Ստորադասական շաղկապի կամ հարաբերական դերանվան առկայությունը կապակցվող բաղադրիչներից որևէ մեկում արդեն իսկ մատնանշում է ստորադաս լինելը: Շաղկապները ու հարաբերական բառերը սովորաբար դրվում են ստորադաս նախադասության սկզբում: Օրինակ՝ Ավին մինչև վերջն էլ չիմացավ, **թե ինչու չորրորդ փամփուշտը բերդանը ներս չառավ** (ԱԲԵ 32):

[1]Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ.3,Երևան 1976, էջ 602

[2]Ս. Աբրահամյան, Վ. Առաքելյան, Վ. Թոսյան, Հայոց լեզու, II մաս, Երևան 1975, էջ 350

Սակայն ժողովրդախոսակցական ոճում կամ վերջինիս ազդեցությամբ նաև բուն գրական լեզվում կարող են շաղկապից, հարաբերական բառից առաջ դրվել ստորադաս նախադասության անդամ կամ անդամներ: Օրինակ՝ **Գեղը *որ* մի մեծավոր գար**, նրանց տանը վեր կգար (ԱԲԵ 35): Թեև շաղկապները միշտ հանդես են գալիս երկրորդական նախադասության կազմում, սակայն երկրորդական նախադասության անդամ չեն. նրանք զուրկ են հյութական բովանդակությունից և ցույց են տալիս միայն քերականական հարաբերություններ:

Ստորադաս և գերադաս նախադասությունների շաղկապավոր կապակցության մեջ մեծ դեր ունեն նաև հարաբերյալները, որոնք մեծ մասամբ դերանուններ են կամ անորոշ նշանակություն ունեցող բառակապակցություններ (**այն, այնպիսի, այնպես, այն ժամանակ, մի բան և այլն**): Օրինակ՝ Նրան **այնպես** թվաց, **թե ֆետրե գլխարկով մարդու սպիտակ թղթերը արտացոլում են ամեն ինչ, ինչպես աղբյուրի վճիտ ջուրը** (ԱԲ 10-11) :

«Ի տարբերություն շաղկապների՝ հարաբերական բառերը համատեղում են երկու պաշտոն. կապում են երկրորդական նախադասությունը գլխավորի հետ և միաժամանակ կատարում երկրորդական նախադասության որևէ անդամի պաշտոն՝ իրենց հյութական բովանդակությունն ստանալով գլխավոր նախադասության այն անդամներից, որոնց լրացնում են տվյալ երկրորդական նախադասությունները[3]»: Օրինակ՝ Վերևում՝ քարանձավների առաջ, մնացին **այն ծերունիները, որոնք ապրեցին «ամեն մեռնողին երանի տալով»** (ԱԲԵ 268)... Բերված օրինակում **որոնք** հարաբերական դերանունը մի կողմից կապում է որոշիչ երկրորդական նախադասությունը գլխավորի հետ, մյուս կողմից երկրորդական նախադասության մեջ կատարում է ենթակայի պաշտոն: Հարաբերական բառը թվով համաձայնում է գլխավոր նախադասության լրացվող անդամին (... **ծերունիները, որոնք ...),** իսկ հոլովական ձևը ստանում է ըստ երկրորդական նախադասության մեջ կատարած շարահյուսական պաշտոնի (օրինակում հարաբերականը դրված է ուղղական հոլովով, որովհետև երկրորդական նախադասության մեջ ենթակա է):

[3]Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ.3,Երևան 1976, էջ 605

Այդ պատճառով գլխավոր և երկրորդական նախադասությունների կապակցությունը հարաբերական բառերով ավելի սերտ է: Գլխավոր և երկրորդական նախադասության կապակցման մյուս միջոցը շարահարությունն է: Այս դեպքում ստորադաս նախադասությունը գերադասին միանում է յուրահատուկ հնչերանգով, իմաստային հարաբերությամբ, բայերի եղանակաժամանակային ձևերի հարաբերակցությամբ, որոշ բառերի գործածությամբ և այլն: Անշաղկապ բարդ նախադասությունները տարածված են հատկապես ժողովրդախոսակցական լեզվում, ասացվածքների, առածների մեջ: Օրինակ՝... Ավին շալակի ցախը դրեց քարին, նստեց **մի կոճղի՝ մի քիչ շունչ առնելու**(ԱԲԵ 30):

Քանի որ առանձին գլուխ չենք հատկացրել նախադասության գլխավոր անդամների պաշտոն կատարող երկրորդական նախադասություններին, ապա հակիրճ ներկայացնենք նաև դրանց կիրառության ոճական արժեքը Բակունցի պատմվածքներում:

«Ենթակա երկրորդական նախադասությունը գործածվում է երկու դեպքում՝ 1)երբ գլխավոր նախադասությամ մեջ չկա ենթակա, 2)երբ գլխավոր նախադասության մեջ կա հարաբերյալով արտահայտված ենթակա[4]»: Օրինակ՝ ...Սաֆանին **թվաց, թե նրա ձեռքը նոր ծնած հորթուկի պես փափուկ էր** (ԱԲԵ 109): Նրա ականջին հասավ **այն, որ Ասյան խոսք տվավ նորից գյուղ գալու** (ԱԲԵ 113): Վերջին նախադասության մեջ թեև գլխավորում կա հարբերյալով արտահատված ենթակա, սակայն չունի կոնկրետ նյութական իմաստ և կարիք է զգացվում լրացնելու, բացահայտելու այն: Այստեղ արդեն երկրորդական նախադասությունը նյութական բովանդակություն տալուց բացի հենց ինքն էլ գլխավոր նախադասության ենթական է:

Ենթակա երկրորդական նախադասության կապը գերադասի հետ իրացվում է **որ, թե** ստորադասական շաղկապներով և **ով, որ, ինչ** հարաբերական դերանուններով: Օրինակ՝ Պառավի մտքովն անցավ, **որ առիթը հարմար է ավելի որոշ ակնարկելու նրա մասին** (ԱԲԵ 197): ... Սիմոնին **թվաց, թե իրենց տնից տանում**

[4]Ս. Աբրահամյան, Վ. Առաքելյան, Վ. Թոսյան, Հայոց լեզու, II մաս, Երևան 1975, էջ 357

են ոչ թե մի ձի, այլ իր եղբորը (ԱԲԵ 216)... **Ով հայրենի ճանապարհով հասնում էր այն ծանոթ կետին**, ... շողշողում էին քաղաքի տների ապակեպատ պատշգամբները, թիթեղյա կտուրները, **ով հասնում էր այդ կետին**, ահով էր նայում ներքև (ԱԲԵ 222): Այս նախադասության մեջ Բակունցը ենթակա ստորադաս նախադասության ոճական կիրառության շնորհիվ նկարագրության միջոցով բացահայտել է գլխավոր նախադասության գործողությունը կատարողին: Ենթակա ստորադաս նախադասությունը գլխավորին կարող է կապակցվել նաև **երբ** հարաբերական դերանունով: Օրինակ՝ Տխուր ժամ էր**, երբ Սիմոնը դռնից հանեց ձին** (ԱԲԵ 216):

«Ստորոգելի ստորադաս նախադասությունը փոխարինում է գերադաս նախադասության բաղադրյալ ստորոգյալի՝ ձևական ստորոգելիական վերադրին՝ ցույց տալով գործողություն, դրություն, վիճակ, որոնք իբրև հատկանիշ վերագրվում են գերադաս նախադասության ենթակային[5]»: Ստորոգելի երկրորդական նախադասությունը գերադասին կապակցվում է **որ, թե**, շաղկապներով և **ով, ինչ, որ(ը), ինչպես, ինչքան, ինչպիսին** և այլ հարաբերական բառերով, իսկ որպես հարաբերյալ կարող են գործածվել **նա, այն, այնպես** և այլ ցուցական դերանուններ: Օրինակ՝ Երբ մահակներով կռիվ էին տալիս Ծիրանի տափի համար, **այնպես էր պատահում, որ մի տարի Մրոցն էր հաղթում**, հաջորդ տարին՝ Միրը (ԱԲԵ 66)... Հետաքրքիրն այն էր, **որ մոտը կանգնած հարևանն էլ չէր հավատում նրա ասածին** (ԱԲԵ 68):

Հանճարեղ գրողի ստեղծագործության լեզվի մասին գրվել են մի շարք աշխատություններ, սակայն նրա ստեղծագործության լեզուն այնքան հարուստ է ու բազմաշերտ, որ անընդհատ կարելի է վեր հանել նոր նրբերանգներ ու իրողություններ: Բակունցի պատմվածքներում իշխող է բարդ նախադասությունը, լեզվական այդ կառույցը նպաստում է բակունցյան ոճի ձևավորմանը: Թեպետ բարդ ստորադասական նախադասությունները բավականին մեծ թիվ են կազմում Բակունցի պատմվածքներում, սակայն դրանք միաձուլվում են հեղինակի ոճին՝ բնավ խրթին ու խճողված չդարձնելով այն, որովհետև կառուցվածքով դյուրամարս են, բակունցյան հատուկ դրոշմ ունեն և մատչելի են: Ավելին՝ ստորադասական

[5] Մ. Միրումյան, Հայոց լեզու, Շարահյուսություն, Երևան 2013, էջ 146

նախադասություններն ավելի դիպուկ, պատկերավոր ու արտահայտիչ են դարձնում Բակունցի խոսքը՝ հնարավորություն ընձեռելով թափանցելու հերոսների ներաշխարհ: Բարդ նախադասությունների գործածության շնորհիվ Բակունցը կարողացել է ստեղծել նաև բնանկարներ, որոնք անկրկնելի ու ինքնատիպ գեղարվեստական պատկերներ են, որոնցում բառերը հուզական լիցք, գույն ու բույր ունեն: Քանի սերունդ է ապրել Բասուտա գետի մոտ, կարկատած թաղիքները փռել ցեխերի վրա, եղեգնով պատել վրանները, և ամեն գարնան, **երբ Կաքավաբերդի լանջին բացվել է ալպիական մանուշակը**, այծ ու ոչխար քշել են բերդի լանջերը, պարկը պանրով լցրել ու ձմեռը կրծել կորեկ հաց և այծի պանիր (ԱԲ 4):

Բակունցի արձակը հարուստ է նաև հոգեբանությամբ և կենսափիլիսոփայությամբ: Նա երկրորդական նախադասությունների դիպուկ գործածությամբ կարողացել է թափանցել հասարակական և ազգային հոգեբանության մեջ: Հոգեբանի դիտողականությամբ և խոսքի ուժով գծագրում է ջրվոքի կերպարը, ապա ստեղծում Սասնա թանձր մթնոլորտ և ներկայացնում Հազրոյի էպիկական կերպարը: Ես լսում եմ, **թե ինչպես առվի ավազի մեջ զրնգում է նրա ծանր բահը**, արևը լուսավորում է բահը և թվում է, **թե ջրվոքի ուսին բռնկված ջահ է**: ... **Ինչքան** մոտենում է ջրվոքը, **այնքան** ավելի բարձրահասակ է երևում: Ես նայում եմ նրա բաց կրծքին, թվում է**, թե նրա ձայնը պիտի խրոխտ թնդա**: (ԱԲԵ 144):

Նա թափանցում է անտեսանելի, աներևույթ բայց մեծ մի աշխարհ՝ դուրս հանելով այնտեղից բազում գեղեցկություններ: Անչափ սիրում է իր երկրի բնությունը, հողը, կապված է հասարակ մարդկանց ու գյուղական տարերքին:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գլխավոր նախադասության գոյականական անդամին լրացնում են որոշիչ,հատկացուցիչ, բացահայտիչ երկրորդական նախադասությունները:

1.1 ՈՐՈՇԻՉ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Որոշիչ երկրորդական նախադասությունը լրացնում է գլխավոր նախադասության գոյականական անդամին և այն բնութագրում է այս կամ այն տեսակետից՝ որակի, չափի և այլն:

Շատ հարուստ են որոշիչ երկրորդականների կապակցության միջոցները: Որպես այդպիսիք հիմնականում օգտագործվում են հարաբերական դերանունները, որոնցից առավելապես տարածված է **որ** – ը: Ապա դատարկ տուփը ձեռքին՝ նա վազեց երեխաների մոտ՝ նրանց ցույց տալու սպիտակ թիթեղյա տուփը, **որ** չտեսած նորություն էր այդ քարափների համար: Օգտագործվում են նաև **ով, ինչ, ուր, որտեղ, ինչպիսի, որպիսի, ինչպես, որքան, ինչքան** հարաբերականները: Աշխարհը նրա համար ընդարձակ թանգարան էր, **ուր** չկար ոչինչ կենդանի և ոչ մի բզեզ: Շաղկապներից կիրառվում են **որ, թե, երբ, որպեսզի,** ինչպես նաև **ասես (թե), կարծես (թե)** շաղկապական բառերը: Որպես հարաբերյալներ՝ գերազանցապես օգտագործվում են **այն, այնպիսի** ցուցական, երբեմն նաև **նույն, նունպիսի, այնքան, նույնքան** դերանունները, որոնցից վերջին երկուսը նշում են առարկայի քանակական հատկանիշ:

Հարաբերական որոշիչ երկրորդականները առարկայի բնորոշումը տարբեր երանգներով են ներկայացնում՝ տարբեր դերանունների օգտագործմամբ: Օրինակ՝ **նույնպիսի** հարաբերյալը էլ ավելի է

շեշտում նկրագրվող որակական հատկանիշի նույնությունը: Կարելի էր առավոտ կանուխ գետից ջուր վերցնելով խմել **նույնպիսի** մաքուր և սառը ջուր, **ինչպիսին** վերի գյուղն էր խմում (ԱԲԵ 67):

Այնպիսի – որ (դերանուն) կապակցական կաղապարով երկրորդականը առարկայի որակական բնորոշումը ներկայացնում է հետևանքի երանգով: ... Մրոցում **այնպիսի** մարդիկ կային, **որոնք** ամբողջ Միրի չափ ոչխար ունեին (ԱԲԵ 67):

Գիտենք, որ Բակունցը խոսքի հմուտ վարպետ է: Նրա գեղարվեստական պատումում զգալի է բարդ ստորադասական նախադասությունների թիվը: Նշենք նաև, որ կան ստեղծագործություններ, որոնք կարծես միտումնավոր հագեցած լինեն նույնաբնույթ բարդ ստորադասական նախադասություններով: Նմանատիպ ոճական դրսևորմամբ նույնպես առանձնանում է բակունցյան խոսքարվեստը: Եթե **<<**Ալպիական մանուշակ**>>** - ում գերակշռում են ժամանակի պարագա ստորադաս նախադասությունները, ապա **<<**Ծիրանի տափ**>>** - ում գեղարվեստականությունն ընդգծում է հարաբերական որոշիչ երկրորդականներով: Որոշիչ երկրորդական նախադասությամբ բարդ ստորադասական կառույցները ըստ գերադաս և ստորադաս նախադասությունների փոխկապակցության բնույթի լինում են **անմասնատունակ** և **մասնատունակ: Անմասնատունակ** կառույցներում երկրորդական նախադասության գործածությունը պարտադիր է, քանի որ գլխավորի գոյականով արտահայտված որոշյալը կարիք ունի որևէ տարբերակիչ հատկանիշով բնորոշվելու: Ցետրե գլխարկով մարդը կուացավ, պոկեց մեկը և դրեց տետրի **այն** թերթի արանքը, **որի** վրա նկարված էր եռոտանին և այն բարակիրան կինը (ԱԲ 11): «**Մասնատունակ** կառույցներում երկրորդականի գործածությունը պարտադիր չէ, քանի որ գլխավորի գոյականով արտահայտված որոշյալը խոսքային տվյալ իրադրության մեջ իր բառական նշանակությամբ արդեն բավականաչափ որոշակի է, կամ էլ արդեն իսկ բնորոշված է այլ որոշիչով: Այս դեպքում երկրորդականը ստանում է **լրացուցիչ, հավելյալ բնութագրման** նշանակություն [6]»:

[6] Գ. Գաբեգինյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան 1984, էջ 156-157

1.2 ՀԱՏԿԱՑՈՒՑԻՉ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Հատկացուցիչ երկրորդական նախադասությունները նկարագրության միջոցով ցույց են տալիս այն առարկան կամ երևույթը, որին վերաբերում, պատկանում է մի այլ առարկա կամ երևույթ՝ դրսևորված գլխավոր նախադասության որևէ գոյականական անդամով»[7]:

Հատկացուցիչ երկրորդական նախադասությունները անմիջապես չեն լրացնում հատկացյալին, այլ նյութական բովանդակություն են տալիս գլխավոր նախադասության հատկացուցչին՝ հարաբերյալին: Իսկ որպես հարաբերյալ հանդես է գալիս միայն **նա** անձական դերանունը՝ դրված եզակի կամ հոգնակի թվով: Երկրորդական նախադասությունը գլխավորին միանում է **ով** հարաբերական դերանվամբ: Օրինակ՝ Սա նրա **տունն է, ով** Ծիրանի տափից շատ հեռու է ապրում*:

Որպես կանոն՝ հատկացուցիչ երկրորդականը լինում է վերջադաս, սակայն կարող է կիրառվել նաև առաջադաս կամ միջադաս: Օրինակ՝ ... **Ով չտանի,** թագավորի հրամանով **նրա տունը**, տեղը, է' – հե~ - հե~յ (ԱԲԵ 213)... Հատկացուցիչ երկրորդականով բարդ ստորադասական նախադասությունների գործածության հաճախականությունը այնքան էլ մեծ չէ:

1.3 ԲԱՑԱՀԱՅՏԻՉ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Բացահայտիչ ստորադաս նախադասությունը բացահայտում է գերադաս նախադասության գոյականական անդամի կամ անձնանիշ դերանվան (բացահայտյալի) ով կամ ինչ լինելը: Օրինակ՝ **Դուք, որ ձեր ամբողջ կարողությունն ու եռանդը նվիրել եք այդ մեծ գործին,** արժանի եք ամենաջերմ վերաբերմունքի և ուշադրության(ԱԲԵ 131):

[7]Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան,Հ. Օհանյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ.3,Երևան 1976, էջ 648

*Համապատասխան հատկացուցիչ երկրորդական նախադասություն չգտնելու պատճառով գրել եմք մեր օրինակը:

«Բացահայտիչ ստորադաս նախադասությունը հաճախ շփոթվում է որոշիչ ստորադաս նախադասության հետ: Տարբերակելու համար պետք է նկատի ունենալ, որ բացահայտիչը առարկայական բնույթի լրացում է, որոշիչը՝ հատկանշային[8]»: Օրինակ՝ **Եկողները, որ հիմնականում երիտասարդ կանայք էին**, գոգնոցները քաշեցին դեմքներին և այդպես փախան (ԱԲԵ 205):

Ինչպես հատկացուցիչ, այնպես էլ բացահայտիչ երկրորդականներով բարդ ստորադասական նախադասությունների գործածության հաճախականությունն այնքան էլ մեծ չէ: Անհամեմատ ավելի են տարածված որոշիչ երկրորդականով կառույցները:

Բացահայտիչ ստորադաս նախադասությունները գերադասին անշաղկապ կապակցությամբ չեն միանում:

[8] Մ. Միրումյան, Հայոց լեզու, Շարահյուսություն, Երևան 2013, էջ 153

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԲԱՑԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Բայական անդամի լրացում ստորադաս նախադասությունները լրացնում են գերադաս նախադասության բայով արտահայտված կամ բայական բաղադրիչ ունեցող անդամին[9]»:

Բայական անդամի լրացում ստորադաս նախադասությունները լինում են երկու տեսակ՝ խնդիրներ և պարագաներ:

1. Խնդիր երկրորդական նախադասությունները կատարում են նույն պաշտոնները, ինչ նախադասության պարզ խնդիրները, այսինքն՝ կարող են լինել ուղիղ, հանգման, միջոցի, վերաբերության և այլն:

2. Պարագայական երկրորդական նախադասությունները նույնպես կատարում են նույն պաշտոնները, ինչ նախադասության պարագաները: Կարող են լինել տեղի, ժամանակի, ձևի, չափի և այլն:

2.1 ԽՆԴԻՐ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Խնդիր երկրորդականները լրացնում են գլխավոր նախադասության խնդրառու բառերին, որոնց իմաստի բացահայտման համար անհրաժեշտ խնդիրը կա՛մ բացակա է լինում գլխավորում, կա՛մ էլ արտահայտված է լինում հարաբերյալով:

«Խնդիր երկրորդականով բարդ ստորադասական նախադասությունները իրենց կառուցվածքային հարկանիշներով գրեթե չեն տարբերվում ենթակա երկրորդականով կառույցներից. նույնն են կապակցության միջոցները՝ շաղկապները, հարաբերական դերանունները և հարաբերյալները[10]»...

[9]Մ. Միրումյան, Հայոց լեզու, Շարահյուսություն, Երևան 2013, էջ 156

[10]Գ. Գաբեգինյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան 1984, էջ 181

Ա. ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ներգործական սեռի բայերը ցույց են տալիս գործողություն, որի կատարման համար պահանջվում է այնպիսի առարկա, որն անմիջաբար իր վրա կրի, կամ որին անցնի գործողությունը: Հաճախ գործողության օբյեկտը ոչ թե առարկա է, այլ որևէ եղելություն, դրություն, երևույթ և այլն: Ահա այս դեպքում ուղիղ խնդրի պաշտոնով հանդես են գալիս մեծ մասամբ երկրորդական նախադասությունները:

«Այսպիսով՝ ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները դրվում են գլխավոր նախադասության ներգործական սեռի բայ – ստորոգյալի կամ դերբայով արտահայտված այլ անդամի սեռի պահանջով և նկարագրում, ցույց են տալիս այն երևույթը, դրությունը, գործողությունը և այլն, որն անմիջաբար անցնում է տվյալ բայի գործողությանը[11]»: Մոխրի մեջ խաղացող երեխաները տեսան, **թե ինչպես շները հարձակվեցին ձիավորների վրա** (ԱԲ 5):

Գլխավորին միանում են **որ, թե** շաղկապներով: Նրան թվաց, **թե օձը խայթեց ակնոցավոր մարդուն** (ԱԲ 6): Իսանանց տանուտեր ախպերն ասում էր, **որ կռիվը օգուտ է ժողովրդին, որ ռուսի թագավորի թախտը հաստատ է, ժողովուրդը շատ և որ շուտով Գերմանի թագավորը հաղթվելու է** (ԱԲԵ 37): Այս նախադասությունը բազմաբաղադրիչ բարդ ստորադասական նախադասություն է, ուր առկա է երկրորդականների համաստորադասում: Երբ գլխավոր նախադասության գործողության օբյեկտը, որը նկարագրվում է երկրորդական նախադասության մեջ, անձ է, որպես կապակցության միջոց գործածվում են **ով (ով որ)**, երբեմն նաև **որ** հարաբերականները, որոնք ևս երկրորդական նախադասությանը տալիս են ընդհանուր – անորոշ նշանակություն: Այս դեպքում գլխավոր նախադասության մեջ առկա է լինում հարաբերյալ: Որպես այդպիսին հանդես են գալիս **նրան, նրանց, ամեն մեկին, բոլորին** դերանունները: Հաբուդը ժպտում էր հոր միամտության վրա, մտաբերում Իսանանց տղոցը, պիսիրին և **նրանց, որոնք հեռավոր դիրքերում կռվում են, ոտ ու ձեռից զրկվում, ցրտից սառչում, թագավորից խաչ ստանում** (ԱԲԵ 38):

[11]Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան,Հ. Օհանյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ.3,Երևան 1976, էջ 655

Ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները սովորաբար դրվում են լրացվող բառից հետո և այդ պատճառով մեծ մասամբ լինում են վերջադաս կամ միջադաս: Ոչ միայն զգեստից, այլև ձի նստելուց երևում էր, **որ առաջին երկու ձիավորը քաղաքի մարդիկ են** (ԱԲ 4)…Մայրն ուզում էր, **որ նա գնա գյուղական գրագիր դառնա կամ ծառայի պրիստավի մոտ**, իսկ Բադին արհեստի էր կողմնակից (ԱԲԵ 36):

Բ. ՀԱՆԳՄԱՆ ԽՆԴԻՐ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Հանգման խնդիր ստորադաս նախադասությունը ցույց է տալիս որևէ առարկա, երևույթ կամ գործողություն, որին հանգում է գերադաս նախադասության լրացյալ բայի արտահայտած գործողությունը[12]»:

Հանգման խնդիր ստորադաս նախադասությունները միանում են գլխավորին որ և թե շաղկապներով: Պիտի մեծանային և սպասեին, **որ թևավոր մի տղա առներ առաջնակին, հետո միջնակին, փոքրին** (ԱԲԵ 50): Հանգման խնդիր ստորադաս նախադասությունները գերադասին միանում են նաև **ով, ինչ, որ(ը)** հարաբերականներով: Օրինակ՝ Երեկոյան դարձյալ հանդիպեցին նրան, **ով նույն ճանապարհով վրանների կողմն էր բարձրանում** (ԱԲԵ 98):

Հանգման խնդիր ստորադաս նախադասությունն ունենում է վերջադաս շարադասություն: Օրինակ՝ Տղան սունկը կերավ և աչքերը սևեռեց կոնսեվի փայլուն տուփին, սպասելով, **որ դատարկեն** (ԱԲԵ 9):

Գ. ԱՆՋԱՏՄԱՆ ԽՆԴԻՐ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Անջատման խնդիր երկրորդական նախադասությունը ցույց է տալիս երևույթ, առարկա, որից սկզբնավորվում է գլխավոր նախադասությամբ արտահայտված գործողությունը կամ անջատվում է մի բան:

[12]Մ. Միքումյան, Հայոց լեզու, Շարահյուսություն, Երևան 2013, էջ 159

«Անջատման խնդիր երկրորդական նախադասությունը գլխավորին կապակցվում է **ով, որ(ը), ինչ** հարաբերականներով, **որ, թե** շաղկապներով: Այսպիսի կապակցության գլխավոր նախադասության մեջ կարող է գործածվել հարաբերյալ կամ չգործածվել: Որպես հարաբերյալ գործածվում են հետևյալ դերանուններն ու դերանվանական կապակցությունները՝ դրված բացառական հոլովով. **նրանից, բոլորից, ամենից, ամեն ինչից, այն բանից, այն ամենից**[13]»: Ես պատմությունը սկսեցի **այն բանից, թե ինչպես եմ տարիներ առաջ այս գյուղ եկել** (ԱԲԵ 116): Անջատման խնդիր ստորադաս նախադասությունը սովորաբար լինում է վերջադաս:

Դ. ՄԻՋՈՑԻ ԽՆԴԻՐ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Միջոցի խնդրի շարահյուսական պաշտոն կատարող երկրորդական նախադասությունները նկրագրում են այն գործողությունը, երևույթը կամ եղելությունը, որի օգնությամբ կամ որի միջոցով կատարվում է գլխավորի գործողությունը[14]»: Միջոցի խնդիր ստորադասական նախադասությունները գլխավորին միանում են **որ, թե** շաղկապներով, երբեմն էլ՝ **ինչ, (ինչ որ)** հարաբերականով և ունենում են վերջադաս կամ միջադաս շարադասություն: Գլխավոր նախադասության մեջ հանդես են գալիս **նրանով, այն բանով** հարաբերյալները, որոնց նյութական բովանդակություն են տալիս երկրորդական նախադասությունները: Միշտ հպարտանում է **նրանցով, ովքեր** գտնվում են առաջին շարքերում(ԱԲԵ 100):

Ե. ՎԵՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Վերաբերության խնդիր ստորադաս նախադասությունը ցույց է տալիս այն առարկան կամ

[13]Ս. Աբրահամյան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան, Հայոց լեզու, Շարահյուսություն, Երևան 1975, էջ 382

[14]Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան,Հ. Օհանյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ.3,Երևան 1976, էջ 669

երևույթը, որին վերաբերում է գերադաս նախադասության բայ – լրացյալի արտահայտած գործողությունը[15]»: Վերաբերության երկրորդական նախադասությունները միանում են գլխավորին **որ** և **թե** շաղկապներով: Երբեմն զրուցում էին, **թե ինչ արհեստի դնեն Հաբուդին** (ԱԲԵ 35): Գլխավոր նախադասության մեջ նրանց կարող են համապատասխանել **այն մասին** կամ **նրա մասին** հարաբերյալները, որոնք մի կողմից օժանդակում են գլխավոր և երկրորդական նախադասությունների կապի ուժեղացմանը, մյուս կողմից ավելի որոշակի են դարձնում երկրորդական նախադասության բնույթը՝ տարբերակելով այն ուղիղ խնդիր երկրորդական նախադասություններից: Խոսք եղավ և **այն մասին, որ** գյուղում բանտարկյալ չկա (ԱԲԵ 272):

2.2 ՊԱՐԱԳԱ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Պարագա ստորադաս նախադասությունները ցույց են տալիս գերադաս նախադասության բայական անդամի կատարած գործողության հանգամանքները և հատկանիշները:

Գործողության հանգամանքային հարաբերություններ են արտահայտում տեղի, ժամանակի, նպատակի, պատճառի, հիմունքի, պայմանի, զիջման և հետևանքի, իսկ հատկանշային հարաբերություններ՝ ձևի և չափի պարագա ստորադաս նախադասությունները[16]»:

Նշենք, որ Բակունցի որոշ ստեղծագործություններում հիմնականում հանդիպում ենք տեղի, ժամանակի, նպատակի, պատճառի, պայմանի, ձևի և չափի պարագա ստորադաս նախադասությունների հաճախակի կիրառության: Թերևս նման մոտեցմամբ է կարողացել ստեղծագործություններից շատերի սյուժեն կառուցել հին ու նոր կյանքի հակադրությամբ՝ տալով ոչ միայն գյուղաշխարհի գեղեցկությունն ու հմայքը, այլև կոլորիտը: Նախադասությունների դիպուկ գործածության շնորհիվ մենք տեսնում ենք, որ բակունցյան հերոսներն իրոք գյուղի հասարակ մարդիկ են՝ իրենց սովորական կենցաղով, հոգսերով և մշտական ցավերով:

[15]Մ. Միրումյան, Հայոց լեզու, Շարահյուսություն, Երևան 2013, էջ 163

[16]Մ. Միրումյան, Հայոց լեզու, Շարահյուսություն, Երևան 2013, էջ 165

Ա. ՏԵՂԻ ՊԱՐԱԳԱ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Տեղի պարագա երկրորդական նախադասությունները ցույց են տալիս գլխավոր նախադասության բայ – ստորոգյալի գործողության տեղը:

Տեղի պարագաները կարող են դրսևորել հետևյալ տարածական հարաբերությունները.

ա) այն տեղը, որտեղից սկսվում է գլխավոր նախադասության գործողությունը

բ) այն տեղը, որտեղ կատարվում, տեղի է ունենում գործողությունը

գ) այն տեղը, դեպի որն ուղղված է գլխավոր նախադասության գործողությունը

դ) այն տեղը, որի միջով, վրայով կատարվում է գործողությունը:

Տեղի պարագա երկրորդական նախադասությունները չպետք է շփոթել տեղի իմաստային երանգ ունեցող որոշիչ երկրորդական նախադասությունների հետ: Վերջիններս գործածվում են, երբ գլխավոր նախադասության մեջ կա գոյականով արտահայտված տեղի պարագա, սակայն անհրաժեշտ է պատկերացումն ավելի կոնկրետ դարձնել: Նա հասավ մի փոքրիկ **բարձրության, որտեղ ծառերը շրջապատել էին ինչ – որ ավերակի** (ԱԲԵ 547):

«Ի տարբերություն այս տիպի որոշիչ երկրորդական նախադասությունների՝ տեղի պարագա երկրորդական նախադասությունները դրվում են այնպիսի գլխավոր նախադասությունների մոտ, որոնցում նյութական ինքնուրույն իմաստ ունեցող խոսքի մասով, հատկապես գոյականով արտահայտված տեղի պարագա սովորաբար չի լինում: Գլխավոր նախադասության մեջ կարող են առկա լինել **այնտեղ, այնտեղից, դեպի այնտեղ, այնտեղով** հարաբերյալներ, որոնք ծառայում են գլխավոր և երկրորդական նախադասությունների կապի ուժեղացմանը և նյութական բովանդակություն ստանում վերջինից[17]»:

[17]Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան,Հ. Օհանյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ.3,Երևան 1976, էջ 673

Տեղի պարագա երկրորդական նախադասությունները գլխավորին միանում են միայն հարաբերական բառերով: Որպես կապակցության միջոց գործածվում են **ուր** և **որտեղ** հարաբերական դերանունները: Աթա ապերը ... եզները պահում էր այնտեղ, **ուր հիմա սպիտակ բանտ էր** (ԱԲԵ 369): Երբեմն **ուր** և **որտեղ** հարաբերականներին կցվում է նաև և համադասական շաղկապը, և երկրորդական նախադասությունը գլխավորին միանում է **ուր և, որտեղ և** բարդ շաղկապներով: Ինձ նույն օրը տեղավորեցին մի տան մեջ, **որտեղ և պիտի ապրեի**(ԱԲԵ 116):

Տեղի պարագա երկրորդական նախադասություններն ունեն ազատ շարադասություն: Նրանք կարող են լինել և՝ վերջադաս, և՝ առաջադաս (ավելի հաճախ հանդիպում է առաջադաս գործածությունը): **Որտեղ քարը փխուր է**, փոս է ընկել (ԱԲԵ 165):

Բ. ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՐԱԳԱ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Ժամանակի պարագա երկրորդական նախադասությունը ցույց է տալիս գերադաս նախադասության բայական անդամի և մասնավորապես ստորոգյալի գործողության կամ եղելության ժամանակը[18]»:

Որպես կապակցության հիմնական միջոց այս դեպքում ևս հանդես են գալիս շաղկապներն ու հարաբերական բառերը, որոնք հենց իրենց բառային նշանակությամբ ցույց են տալիս ժամանակային հարաբերություն՝ **երբ, մինչև, մինչև որ, մինչ, մինչդեռ, քանի, քանի դեռ, քանի որ, հենց, հենց որ:** Արջը տանձ է ուտում, իրար թաթով են տալիս, թավալգլոր են լինում չոր տերևների վրա, դարան մտնում, **հենց որ զգում են վայրի խոզերի մոտենալը** (ԱԲԵ 29): Բացառություն է կազմում **որ** շաղկապը, որը կապակցում է գլխավոր և երկրորդական նախադասությունները՝ առանց իմաստային երանգ տալու այդ կապակցությանը: Ժամանակային հարաբերությունն այս դեպքում արտահայտվում է քերականական այլ միջոցներով: **Սառույցին *որ* հասավ**, կանգնեց ոտքի, փորձեց վեր բարձրանալ(ԱԲԵ 32):Այս նախադասության մեջ Բակունցը ժամանակային հարաբերությունն արտահայտել է բայ – ստորոգյալների համաձայնեցմամբ:

[18]Ս. Աբրահամյան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան, Հայոց լեզու, Շարահյուսություն, Երևան 1975, էջ 389

Այստեղ ոճական արժեքն առանձնանում է ոչ միայն նմանօրինակ մոտեցմամբ, այլ նաև **որ** – ի միջադաս գործածությամբ: Նմանատիպ մոտեցմամբ է նաև առանձանում բակունցյան արձակի ինքնատիպությունը:

Ժամանակի պարագա երկրորդական նախադասություն պարունակող բարդ ստորադասական նախադասությունների մեջ սովորաբար առկա է լինում երկու հիմնական տիպի ժամանակային փոխհարաբերություն.

1. համաժամանակության փոխհարաբերություն

2. ժամանակային հաջորդականության փոխհարաբերություն, որն էլ իր հերթին բաժանվում է երկու ենթատեսակի՝

ա) գլխավոր նախադասության գործողությունը հաջորդում է երկրորդական նախադասության գործողությանը

բ) գլխավոր նախադասության գործողությունը նախորդում է երկրորդական նախադասության գործողությանը:

Երբ քամին ցրում է ամպերը, ձորերում հալվում են ամպի ծվեները (ԱԲԵ 3)... (Համաժամանակության փոխհարաբերություն):

Հենց որ տուն էր գալիս, հանգչում էր կրակը բորբոք, հաստվում իր գյուղում արհեստ սովորելու մտքին (ԱԲԵ 36): (Ժամանակային հաջորդականության փոխհարաբերություն՝ գլխավոր նախադասության գործողությունը հաջորդում է երկրորդական նախադասության գործողությանը):

Դեռ հորթաթաթ էր, **երբ մայրը մեռավ** (ԱԲԵ 54)... (Ժամանակային հաջորդականության փոխհարաբերություն՝ գլխավոր նախադասության գործողությունը նախորդում է երկրորդական նախադասության գործողությանը):

Ժամանակի պարագա ստորադաս նախադասությունները հիմնականում ունենում են նախադաս կամ վերջադաս շարադասություն: **Հենց որ բերդի պարիսպների տակ ոտնաձայն է լսվում,** նրանք կանչյունով աղմկում են (ԱԲ 3)... Որքան մեծ եղավ տղայի ուրախությունը, **երբ նա ստացավ երկրորդ տուփը** (ԱԲ 10):

Բակունցի ստեղծագործություններում գերակշռում են ժամանակի պարագա ստորադաս նախադասությունները: Հաճախ ենք հանդիպում նաև ընդհանրապես սակավ գործածվող ժամանակի պարագա ստորադաս նախադասությունների միջադաս գործածությանը: Օրինակ՝ Մյուս օրը, **երբ տավարը հանդ էր տանում**, նա ուզեց իր որդու երեկվա ախոյանների կովերը ջոկի տավարից (ԱԲԵ 45)... Եվ մի օր էլ, **երբ Ղազախի Օհանը փողոցում Շահանից ուզեց Սանդուխտին իր որդու համար,** ոչ մի խոսք չասաց կտավատի կապույտ ծաղիկների մասին (ԱԲԵ 51)... **Գյուղացիները *երբ* քաղաք իջան**, ձիերը կապեցին հրապարակից հեռու (ԱԲԵ 224): **Ցոլակը գոմից *երբ* դուրս եկավ,** վրնջաց և ականջները խլշեց: Այս նախադասություններում ***երբ*** **–** ի միջադաս գործածությունը նույնպես ընդգծում է ոճական արժեքը և պատումը մոտեցնում ավելի ժողովրդախոսակցական ոճին: Ժամանակի պարագայի հաճախակի կիրառությունը թերևս նախապայման էր գեղագիտության ակունքներին ավելի մոտ լինելու, մարդկային կեցության ու բնության ակունքները որպես սկիզբ ընդունելու և այդ նախնական վիճակի հարաբերությունները բացահայտելու համար:

Գ. ՊԱՏՃԱՌԻ ՊԱՐԱԳԱ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Պատճառի պարագա երկրորդական նախադասությունները ցույց են տալիս գլխավոր նախադասության մեջ նկարագրված գործողության կամ երևույթի առաջացման պատճառները[19]»:

Պատճառի պարագա ստորադաս նախադասությունը գլխավորի հետ կապակցվում է **որովհետև, քանի որ, մանավանդ որ** շաղկապներով, սակավ դեպքերում՝ **թե** շաղկապով: Օրինակ՝ Նույնիսկ դուռ ունի**, որովհետև կինը դուռը վրա է դնում** և **մի բան շալակած իջնում գետի կողմը** (ԱԲԵ 72): Պատճառի պարագա ստորադաս նախադասությունը գլխավորի հետ կապակցվում է նաև **որ** շաղկապով: Օրինակ՝ Դռան մոտ Շահանը բարկացավ աղջկա վրա, **որ փեշից է բռնում ծծկերի պես** (ԱԲԵ 52): Հաբուդն ուրախ էր, **որ նա քաղաքներ պիտի տեսնի, լեզու սովորի** (ԱԲԵ 39): Պատճառի պարագա ստորադաս նախադասությունները ունենում են թե՛ նախադաս, թե՛ վերջադաս շարադասություն: **Որովհետև այդ օրը**

[19]Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան,Հ. Օհանյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ.3,Երևան 1976, էջ 719

Պանիկը անտառ չպիտի գար, Ավիկ գերադաս համարեց մի շալակ ցախ տանել տուն (ԱԲԵ 30): Իսկ ցավը հետզհետե սաստկանում էր, **որովհետև Սիմոնը հուսահատ կատաղությամբ չեչաբարը խում էր** նրա մեջքին (ԱԲԵ 225):

Դ.ՀԻՄՈՒՆՔԻ ՊԱՐԱԳԱ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հիմունքի պարագա ստորադաս նախադասությունը ցույց է տալիս գլխավոր նախադասության բայական անդամի արտահայտած գործողության կամ եղելության հիմունքը:

Հիմունքի պարագա երկրորդական նախադասությունը գլխավորի հետ կապվում է **քանի որ, որովհետև, որ, չէ որ, մանավանդ(որ)** շաղկապներով: Օրինակ՝ **Քանի որ թուղթը կնքված էր կնիքով**, գրված էր պատշաճ ձևով, նախագահը բացեց մոմից մատյանը և գրեց (ԱԲԵ 231): Հիմունքի պարագան գլխավորի հետ երբեմն էլ կապվում է **որքան, որքանով** դերանուններով: **Որքանով մեզ հայտնի է,** այնտեղ դեպքերը ծավալվում են ցանկալի ուղղությամբ (ԱԲԵ 118): Այս նախադասության մեջ հիմունքի պարագան ունի նախադաս շարադասություն, սակայն ունենում է նաև վերջադաս շարադասություն:

Ե.ՆՊԱՏԱԿԻ ՊԱՐԱԳԱ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Նպատակի պարագա երկրորդական նախադասությունը ցույց է տալիս, թե ինչ նպատակով է կատարվում գլխավոր նախադասության մեջ նկարագրված գործողությունը: Պետին գնաց, **որ ջուր խմի մոտակա աղբյուրից, ցրված նախիրը հավաքի ձորի մոտ** (ԱԲԵ 57):

Նպատակի պարագա ստորադասական նախադասությունները հիմնականում լրացնում են ամբողջ գլխավոր նախադասությանը: Պարագայական մյուս ստորադասականներից շատերի նման ազատ լրացումներ են, և նրանց առկայությունը կախված է ոչ թե գլխավորի քերականական կառուցվածքից, այլ սոսկ հաղորդման նպատակից:

Մասնատունակ այս կառույցների բաղադրիչները գլխավորին միանում են **որպեսզի, որ** շաղկապներով: **Որ** շաղկապը տարածված է առավելապես կենդանի խոսակցական լեզվում և գեղարվեստական գրականության մեջ: Օրինակ՝ Առաջին աֆլորականչի հետ զարթնում էր Պետին, տրեխները հագնում, տան առաջ հոսող առվակի ջրից մի երկու կից անում, երեսը լվանում, փափախով սրբում ու գեղի ծայրին կանգնում, **որ կովերը դուրս անեն, ինքը սարը տանի պահելու** (ԱԲԵ 53):

Նպատակի պարագա երկրորդական նախադասության ստորոգյալը դրվում է ըղձական եղանակով, որովհետև այն ցույց է տալիս դեռևս չկատարված գործողություն: Օրինակ՝ Դանակը հանեց, **որ արյուն առնի**, ականջի ծայրերից պատռեց մի քիչ (ԱԲԵ 57):

Եթե նպատակի պարագա երկրորդական նախադասությունը կապակցվում է **որպեսզի** շաղկապով, ապա կարող է լինել թ'ե նախադաս, թ'ե միջադաս և թ'ե ետադաս: **Որպեսզի նրան չհանդիպեն,** ցրվեցին՝ ինչ – որ ճշան անելով ընկերոջը (ԱԲԵ 551): **Որպեսզի** շաղկապով երկրորդական նախադասությունների միջադաս գործածությունը սակավ է: Միջադաս են գործածվում այն դեպքում, երբ նրանք լրացնում են գլխավորի ոչ թե ստորոգյալին, այլ դերբայով արտահայտված այլ անդամի կամ ձևի և ժամանակի պարագաների: Օրինակ՝ Հերիք էր աչքն ընկներ մի դեմքի, տեսներ գեղեցիկ մի անկյուն, մամմռապատ մի քար, **որպեսզի թղթի վրա մատիտով նկարեր այն,** ինչ տեսել էին նրա աչքերը (ԱԲ 5): **Որպեսզի** շաղկապը մեծ մասամբ լինում է ետադաս: Օրինակ՝ Բժիշկն արձանագրություն կազմեց և վերադարձավ սեղանի շուրջը, **որպեսզի նույն գործ տաղտկությամբ շարունակեն գործը** (ԱԲԵ 228): Սիմոնը Սաֆու տղայի հետ արդեն իջնում էր ձորակը, **որպեսզի միանա ուրիշ ձիավորների** (ԱԲԵ 217):

Զ. ՊԱՅՄԱՆԻ ՊԱՐԱԳԱ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Պայմանի պարագա երկրորդական նախադասությունը ցույց է տալիս այն պայմանը, որի առկայությամբ միայն կարող է իրագործվել գլխավորում նկարագրված գործողությունը:

Պայմանի պարագա երկրորդական նախադասությունները գլխավորի հետ կապվում են **եթե, թե, որ, թե որ, երբ, միայն, միայն թե, եթե...ապա** շաղկապներով: Օրինակ՝ **Եթե** հնագետի գլխում Բակուր իշխանն էր և մատենագրի մագաղաթը, **ապա** նկարիչը հիշում էր մանուշակները (ԱԲ 7)... **Թե, թե որ, որ** շաղկապները տարածված են մասնավորապես ժողովրդախոսակցական լեզվում և գեղարվեստական գրականության մեջ: Ստորադաս բաղադրիչի կազմում այդ շաղկապները հաճախ միջադաս են դրվում, մասնավորապես երբ այդ բաղադրիչը առաջադաս է: Օրինակ՝

- Պապի, **թագավորը նամակդ որ ստանա,** ի՞նչ պիտի անի (ԱԲԵ 159):

Որ շաղկապի միջադաս գործածությամբ Բակունցը շեշտել է գյուղացի տղայի անմիջականությունը, պարզությունն ու միամտությունը:

Պայմանի երկրորդականները շարադասությամբ ազատ են, սակայն առավել տարածված է նրանց առաջադաս գործածությունը: **Եթե ճանապարհին տեսներ մեկին գողացած փայտը շալակին**, Պանինի շները պիտի հարձակվեին նրա վրա (ԱԲԵ 29)... **Եթե անտառը չլինի**, սարից եկող սարից եկող հեղեղը մի գիշեր կսրբի Ամարը, քարերով կջարդի կուժ ու խնոցի, կխառնի տուն ու մարագ (ԱԲԵ 49):

Է. ԶԻՋՄԱՆ ՊԱՐԱԳԱ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Զիջման պարագա երկրորդական նախադասությունները ցույց են տալիս այնպիսի գործողություն, հակառակ որի կատարվում է գլխավոր նախադասության գործողությունը:

Գերադաս նախադասության հետ կապակցվում են զիջական շաղկապներով՝**թեև, թեկուզ, չնայած, փոխանակ** և այլն: Օրինակ՝ Բայց և այնպես նա մնում էր, **թեև** անպտուղ և առանց նոր ընձյուղների (ԱԲԵ 89):

Զիջման պարագա երկրորդական նախադասությունները շատ մոտ են հերիակական իաստ ունեցող բարդ համադասական նախադասություններին: Երկու տիպի նախադասությունների համար էլ օգտագործվում

են զուգադրական շաղկապներ՝ բաղկացած ստորադասական և համադասական շաղկապներից՝ **թեև ... բայց, չնայած ... սակայն** և այլն: Օրինակ՝ **Թեկուզ** անունը Ծիրանի տափ է, **բայց** և ծիրանի ոչ մի ծառ չկա այնտեղ (ԱԲԵ 66): **Թեկուզ** տաք թեյը վառեց մատը, **բայց** ծպտուն չհանեց (ԱԲ 10):

Ը. ՁԵՎԻ ՊԱՐԱԳԱ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ձևի պարագա ստորադաս նախադասությունը ցույց է տալիս գլխավոր նախադասության մեջ նկարագրված որևէ գործողության կամ իրողության ձևը:

Այս նախադասությունները միանում են գլխավորին **որ, կարծես, կարծես թե, ասես, ասես թե** շաղկապներով և շաղկապական բառերով:

Հետևանքի երանգ ունեցող ձևի պարագա երկրորդական նախադասությունները միշտ ունենում են վերջադաս շարադասություն և միանում են գլխավորին **որ** շաղկապով, որին գլխավոր նախադասության մեջ պարտադիր կերպով համապատասխանում է **այնպես** հարաբերյալը: Օրինակ՝ Մեկ էլ, թաֆստոցից դուրս կգար, կմոնչար **այնպես, որ արջերն էլ էին ֆնից զարթնում և մռռում** (ԱԲԵ 29):

Ձևի պարագա երկրորդական նախադասությունները ավելի հաճախ ունենում են համեմատության իմաստային երանգ, այսինքն՝ ցույց են տալիս գլխավոր նախադասության գործողության կատարման ձևը՝ համեմատելով նախօրոք հայտնի մի այլ գործողության հետ: Այս բնույթի ձևի պարագա երկրորդական նախադասությունները գլխավորին միանում են **ինչպես** հարաբերական բառով: Օրինակ՝ Այդ սովորույթը մնացել էր **այնպես հաստատ, ինչպես հարևան հաստաբուն ընկուզենին** (ԱԲԵ 34):

Ձևի պարագա ստորադաս նախադասությունները հիմնականում գործածվում են վերջադաս շարադասությամբ: Օրինակ՝ Նա ուզում էր աչխարհ **տեսնել, ինչպես ասում էր նրա ընկերը** (ԱԲԵ 36)…

Թ. ՁԱՓԻ ՊԱՐԱԳԱ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Չափի պարագա երկրորդական նախադասությունները բնույթով մոտ են ձևի պարագա

երկրորդական նախադասություններին: Եթե ձևի պարագա երկրորդական նախադասությունը ցույց է տալիս գործողության կատարման ձևը, ապա չափի պարագա երկրորդական նախադասությունը ցույց է տալիս գլխավորի գործողության դրսևորման չափը, թե ինչքան, ինչ չափով է կատարվում գործողությունը:

Չափի պարագա երկրորդական նախադասությունը գլխավորի հետ միանում է **որ, մինչև** շաղկապներով, **ինչքան, ինչչափ, որքան, որչափ, քանի,** երբեմն նաև **ինչ** հարաբերական դերանուններով: Օրինակ՝ Մի փչակի մոտ նստում էր Պանինը, **մինչև շները որսի միսն ուտեն** (ԱԲԵ 29):

Գլխավոր նախադասության մեջ կարող են լինել **այնքան, այնչափ, այնքանով, այն աստիճան** հարաբերյալները, որոնք ավելի որոշակի են դարձնում ստորադասական նախադասության բնույթը և ուժեղացնում են կապը գլխավորի հետ: Օրինակ՝ Գյուղացիք **այնքան** էին վարժ նրա կանչին, **որքան** աֆլորի կանչին (ԱԲԵ 33): Հարաբերյալների առկայությունը կիրառությունների մեծ մասում պարտադիր է, մանավանդ **որ** շաղկապի գործածության դեպքում: Այդ պատճառով էլ չափի պարագա երկրորդական նախադասությունները հիմնականում **անմասնատունակ** են: Օրինակ՝ Տարիներ շարունակ նույն հանդում ու արտում տավար պահելով նա **այնքան** էր վարժ խոտին ու ծաղկին, **որ** անսխալ կարող էր ասել, թե որ ծաղիկն է կանուխ բացվում, որ խոտն է ցավի դեղ(ԱԲԵ 57):

Որ շաղկապով կապակցված երկրորդականների շարադասությունը միշտ կայուն է՝ պարտադիր վերջադաս: Օրինակ՝ Տարիների ընթացքում ամեն ինչ ամեն օր կրկնվել էր **այնքան** նման իրար, **որ** շարժումները մեքենայացել էին (ԱԲԵ 34):

Չափի պարագա ստորադաս նախադասությունները հիմնականում բաժանվում են երկու խմբի.

Ա) Չափի հարաբերությունն արտահայտվում է հետևանքի նկարագրությամբ: Օրինակ՝ Բադու որդին՝ Հաբուդը, հասել էր **այնքան, որ օգնում էր հորը** (ԱԲԵ 34):

Բ) Չափի հարաբերությունն արտահայտվում է համեմատության միջոցով: Օրինակ՝ Նա ձյունի վրա **նույնքան** թեթև էր քայլում, **ինչքան** արջը չոր տերևների վրա (ԱԲԵ 31):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Օգտվելով համապատասխան գիտական և գեղարվեստական գրականությունից, վերապատրաստումների ընթացքում ձեռք բերած գիտելիքներից և ելնելով մանկավարժական մեր փորձից՝ եկել ենք եզրակացության, որ Բակունցի գրավչություններից մեկն էլ լեզուն է՝ պարզ ու կախարդիչ: Երկրորդական նախադասությունների միահյուս ու ներդաշնակ կապակցման շնորհիվ Բակունցը կարողանում է ներկայացնել մի աշխարհ, որը, ձուլված բնությանը, իր ներքին օրինաչափությունների մեջ կրում է բնության նախաստեղծ շունչը: Մարդը և բնությունը, մարդու կյանքը և բնության տարերքը, մարդկանց ներքին փոխհարաբերությունները ու բնության հետ սերտորեն կապված լինելու մարդկանց ձգտումը փոխանցվում է նաև ընթերցողին: Թվում է, **թե այդ մոռացված մի անկյուն է այն օրերից, երբ դեռ մարդը չկար, և բրածո դինոզավրը նույնքան ազատ էր զգում իրեն, ինչպես արջը մեր օրերում** (ԱԲԵ 28):

Իր զրույցներից մեկում, դառնալով Մարտիրոս Սարյանին, Ավետիք Իսահակյանն ասել է. «Կոմիտասի երգերի ու քո գույների կապակցությամբ խոսում են իբրև այնպիսի հրաշքի մասին, որը անհնարին է արտահայտել խոսքով: Բայց, գիտե՞ս, իմ կարծիքով, դա այնքան էլ ճիշտ չէ: Հայաստանում կար մի գրող, որի բառերը երգում էին կոմիտասյան հանգով և փայլատակում էին քո կտավների բոլոր գույներով: Այդ գրողը Ակսել Բակունցն է[22]»: Դիպուկ է Իսահակյանի բնորոշումը, որովհետև Բակունցի ստեղծագործությունը վիթխարի, դարակազմիկ երևույթ է առհասարակ մեր գեղարվեստական մտքի պատմության մեջ:

Բակունցը կարողացավ հավատարիմ մնալ իր դավանանքին. «Ժողովրդի լեզուն պիտի հասկանաս ու գրես բնության լեզվով, որ ամեն ինչ լեզու առած խոսի հոգուդ հետ>»: Այո՛, Բակունցը գեղարվեստական արձակում մեծ կարևորություն է տալիս ժողովրդական կենդանի խոսքին, հետևողականորեն ընտրում այն բառը, բառակապակցությունն ու նախադասությունը, որոնք կարող են արտահայտել ոչ միայն հեղինակի ու

[22]Ա. Բակունց, Երկեր, Երևան-1986, էջ 3

հերոսի միտքը, այլև ցուց տալ կենցաղի մանրամասները՝ գյուղի կենցաղն ու առօրյան, նյութական և հոգեկան ցավերի դրսևորումները: Միջավայրին հատուկ սոցիալական բևեռացումներն իրենց հերթին բերում են նաև հերոսների լեզվամտածողության բևեռացում՝ գրական լեզու, բարբառ, տեղայնացված խոսք և այլն: Նման դեպքերում Բակունցն այնպես ներդաշնակ է միահյուսում գրական ժողովրդականը բարբառային խոսքին, որ հաճախ այդ տարբերությունները չեն զգացվում: Համադրելով գրականն ու ժողովրդականը՝ նա լեզուն դարձնում է կենդանի ու պարզ, բայց ոչ երբեք պարզունակ:

Բակունցը գրական լեզվի զարգացման ընթացքին համահունչ շարունակ մշակել, հղկել ու բյուրեղացրել է մայրենի լեզուն: Զուր չէ, որ Բակունցի գեղարվեստական արձակի լեզուն համարում են բանաստեղծական լեզու, և դա ամենասովորական ընթերցողն էլ նկատում է:

Նախադասությունների ընտրությունը և կիրառումը որոշակիորեն պայմանավորված են նաև նյութի պահանջներով, ինչպես նաև գրական երկի ժանրային բնույթով: Լեզուն Բակունցի մոտ նաև հոգեբանություն է, հոգեվիճակ արտահայտելու միջոց: Նրա յուրաքանչյուր հերոսի ներաշխարհում կուտակված հոգսը, մտահոգությունը, տխրությունն ու ուրախությունը արտահայտվում և արտացոլվում են յուրովի՝ հաշվի առնելով հերոսներից յուրաքանչյուրի ինքնահատուկ լեզվամտածողությունը:

Բակունցի ստեղծագործությունների շարքում կան այնպիսի գործեր, որոնցում հերոսը խոսում է իր պատմաշխարհի բարբառով: Հիշենք «Ծիրանի փողը» պատմվածքի հերոս Հազրոյին: Առանց Հազրոյի կոլորիտային բարբառի անհնար է ներկայացնել նրա կերպարի ինքնատիպությունը, մտորումներն ու խոհերը, հեռվում մնացած հայրենիքի և հարազատների կարոտը: «Մըր բախտ կապած ենք գդալ ջրի...Մըր հողեր լե ցրվուկ: Է'հ, հացի տեղ արուն շատ կերանք: **Հիմա *որ* սերմ թալինք, սերմ վերունք**, էլի գոհություն (ԱԲԵ 127)»: Հազրոյին եթե փորձեր Բակունցը խոսեցնել գրական լեզվով, հերոսի բնական, անխառը կերպարն ամբողջական չէր լինի:

Երբ թերթում էի Բակունցի բազմիցս կարդացած ստեղծագործությունների էջերը, որպեսզի դուրս

գրեի երկրորդական նախադասությունները, հաճախ մոռանում էի իմ բուն անելիքը և կրկին միանում Դիլան դայու և Սոնայի մարդկային նուրբ զգացումների ու խոր ապրումների սիրո գեղեցիկ պատմությանը, Խոնարհ աղջկա լուռ համակրանքին և Հազրոյի կյանքի ողբերգական պատմությանը:

Բակունցի լեզվում իշխող են բարդ նախադասությունները, մասնավորապես՝ բազմաբաղադրիչ ստորադասական կառույցները: Սակայն դրանք բոլորովին էլ խրթին չեն դարձնում Բակունցի լեզուն, բոլորովին չեն ստեղծում ոճի խճողում, անգամ համահունչ են հեղինակի խոսքի պարզությանը: Ընդհակառակը՝ բազմաբաղադրիչ բարդ ստորադասական նախադասությունները նպաստում են, որ բակունցյան պատկերները ավելի ցայտուն ու տպավորիչ դառնան, և ընթերցողը բնավ չի զգում բազմաստիճան այդ կառույցների ծանրությունը: Ահա մի ցայտուն օրինակ՝ Նայում ես և չես կարողանում որոշել՝ **ծեր է Ավին, թե դեռ երիտասարդ, որտեղից է գալիս նրա ձայնը, գուցե մարդ չէ, այլ խրտվիլակ, գուցե չուխայի տակ կմախք է և ոչ միս ու մարմին (ԱԲԵ 32):**

Բակունցը կենսական ավիշի շնորհիվ գրավում է ընթերցողին, բակունցյան ոճով կառուցված բարդ երկրորդական նախադասությունների միջոցով գեղեցիկ շղարշի ետևում կարողանում է ցույց տալ իրեն բնորոշ կենսափիլիսոփայությունը, գեղեցիկի ըմբռնումը, մարդկային երջանկությունը և անսահման սերը հայրենի բնության նկատմամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբրահամյան Ս., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, II մաս, Երևան 1975 (էջ 348 - 418)

2. Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Բադիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզու, հ.3, Երևան 1976 (էջ 602 - 761)

3. Բակունց Ա., Ալպիական մանուշակ, Երևան 1969 (էջ 3 - 127)

4. Բակունց Ա., Երկեր, Երևան-1986 (էջ 3 - 550)

5. Գաբեգինյան Գ., Ժամանակակից հայոց լեզու, Երևան 1984 (էջ 77 - 275)

6. Միրումյան Մ., Հայոց լեզու, Շարահյուսություն, Երևան 2013 (էջ 138 - 193)